



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 հունիսի 2008թ.

N 429

ք.Ստեփանակերտ

ԱՆՏԱՌՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անտառային օրենսգրքի 17-րդ հոդվածի դրույթներով՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Սահմանել անտառների պետական մոնիթորինգի իրականացման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչության պետին՝ երկամսյա ժամկետում հաստատել անտառների պետական մոնիթորինգի իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրման ձևերը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԼՂՀ ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կ Ա Ր Գ

ԱՆՏԱՌՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՍՈՆԻՅՈՐԻՆԳԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Անտառների պետական մոնիթորինգն անտառների և անտառային հողերի վիճակի կանխատեսման համար իրականացվող դիտարկումների, հետազոտությունների և գնահատման գործընթաց է, որի նպատակն անտառների և անտառային հողերի վրա անտառների պահպանության, պաշտպանության, վերականգնման և անտառօգտագործման բնագավառում մարդածին և բնական տարբեր տեսակի ներգործությունների և դրանց հետևանքների բացահայտումն է, ապօրինի հատումների, բնափայտի տեղափոխման, իրացման և բացասական այլ գործողությունների կանխարգելումն է, այդ բնագավառում իրականացվող աշխատանքների թափանցիկության ապահովումն է՝ բնակչությանն իրազեկելու միջոցով:

2. Անտառների պետական մոնիթորինգը նպատակաուղղված է անտառային պետական քաղաքականության և ռազմավարության, դրանց կենսագործման պետական ծրագրերի մշակման, իրականացման, անտառների արդյունավետ օգտագործման և կայուն կառավարման ապահովմանը:

3. Անտառների պետական մոնիթորինգի իրականացման փուլերն են՝ տվյալների հավաքագրումը, գրանցումը, վերլուծությունը, ամփոփումը, բացասական երևույթների կանխատեսումը, դասակարգումը, տվյալների բազայի վարումը և հաշվետվությունների տրամադրումը:

II. ԱՆՏԱՌՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՍՈՆԻՅՈՐԻՆԳԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

4. Անտառների պետական մոնիթորինգն ընդգրկում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ամբողջ տարածքը:

5. Անտառների պետական մոնիթորինգն իրականացվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչության (այսուհետ՝ վարչություն) կողմից:

6. Անտառների պետական մոնիթորինգը ներառում է՝

ա/ անտառների և անտառային հողերի վիճակի, դրանց վրա տարբեր տեսակի ներգործությունների ու դրանց հետևանքների, ապօրինի հատումների, բնափայտի անօրինական տեղափոխման, իրացման և բացասական այլ գործողությունների կանխարգելման նպատակով պարբերական դիտարկումներ ու գնահատումներ, կարճաժամկետ ու երկարաժամկետ կանխատեսումներ.

բ/ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անտառային օրենսգրքի և անտառային ոլորտը կարգավորող այլ իրավական ակտերի համաձայն իրականացվող անտառների պահպանության, պաշտպանության, անտառօգտագործման ու վերականգնման, դրանց հետևանքների, ապօրինի հատումների, բնափայտի տեղափոխման, իրացման և բացասական այլ գործողությունների վերաբերյալ տվյալների հավաքագրում, կենտրոնացված հաշվառում, մշակում, վերլուծություն, բացասական երևույթների կարճաժամկետ ու երկարաժամկետ կանխատեսում.

գ/ անտառային օրենսդրության խախտումների, բնափայտի անօրինական տեղափոխումների, իրացման և բացասական այլ գործողությունների դեմ տարվող պայքարի աշխատանքների վերլուծում ու գնահատում, այդ բնագավառում տիրող իրավիճակի և տարվող աշխատանքների թափանցիկության ապահովում.

դ/ անտառածածկ տարածքների, բնափայտի պաշարների, անտառների և անտառային հողերի քանակական ու որակական փոփոխությունների, անտառվերականգնման, անտառային հրդեհների, հիվանդությունների և վնասատուների տարածվածության վերաբերյալ տվյալների հավաքագրում, կենտրոնացված հաշվառում, մշակում ու բացասական երևույթների կարճաժամկետ և երկարաժամկետ կանխատեսում.

ե/ անտառների և անտառային հողերի վրա մարդածին ու բնական գործոնների հետևանքների դիտարկում, հաշվառում, վերլուծում և գնահատում.

զ/ հանրապետությունում փայտանյութի սպառման շուկայի վերլուծություն և գնահատում.

է/ դիտարկման ցանցի (այդ թվում՝ հեռակառավարման դիտարկման) կետերի (տեղամասերի) ներդրում.

ը/ անտառային տնտեսության վարման և ոլորտի զարգացմանն ուղղված ծրագրերի ու նախագծերի ուսումնասիրում և գնահատում:

7. Անտառների պետական մոնիթորինգն իրականացվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջեի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին:

8. Անտառների մոնիթորինգի իրականացման ընթացքում ստեղծվում են մշտական (ժամանակավոր) հենակետեր և դիտարկման ցանց (դիտացանց)՝ դիտարկումների, ստուգայցերի, հետազոտությունների և ուսումնասիրությունների անցկացման համար:

9. Մոնիթորինգի իրականացման նպատակով հենակետերը և դիտացանցը նախագծվում են հաշվարկային հատատեղային ֆոնդի, նախատեսվող հատման եղանակների, անտառածման պայմանների, անտառների գործառնական և հիմնական նպատակային մշանակության առանձնահատկությունների, ինչպես նաև ապօրինի հատումների վերաբերյալ վիճակագրական տվյալների վերլուծության արդյունքների հիման վրա:

10. Հենակետերի և դիտացանցի տեղաբաշխման սխեմայի նախագիծն ընդգրկվում է մոնիթորինգի իրականացման տարեկան ծրագրերում և հաստատվում լիազորված պետական կառավարման մարմնի կողմից:

11. Անտառների մոնիթորինգի իրականացման նպատակով պետական միջոցներով ստեղծված մշտական (ժամանակավոր) հենակետերը հանդիսանում են պետական սեփականություն:

12. Հենակետերն ապահովվում են մշտական (ժամանակավոր) անձնակազմով և տվյալների հավաքագրման անհրաժեշտ սարքավորումներով:

13. Մոնիթորինգի իրականացման ընթացքում հենակետերի կամ դիտացանցի վերաբերյալ ձեռք բերված նյութերը լրացվում և ներկայացվում են լիազոր մարմնի կողմից հաստատված ձևաթղթերով:

14. Հենակետերի կամ դիտացանցի ուսումնասիրությունների վերաբերյալ տվյալների, ինչպես նաև տարեկան կամ ընթացիկ հաշվետվությունների ներկայացման ձևաթղթերը մշակվում և հաստատվում են վարչության կողմից:

15. Բնափայտի ապօրինի տեղափոխման և իրացման վերաբերյալ տվյալների հավաքագրումը հենակետերում և փայտանյութի իրացման տարերային կամ մշտական շուկաներում իրականացվում է համաձայն ապօրինի հատումների և անտառանյութի՝ անտառից դուրսբերման մոնիթորինգի չափորոշիչների:

16. Անտառների պետական մոնիթորինգի իրականացման նպատակով վարչությունը ստանում է համապատասխան պետական մարմինների աջակցությունը:

III. ԱՆՏԱՌՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄԸ, ՎԵՐԼՈՒԾՈՒՄԸ, ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

17. Անտառների պետական մոնիթորինգի իրականացման նպատակով վարչությունն օգտվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տնտեսական զարգացման նախարարության, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր ԼԴՀ ոստիկանության, անհրաժեշտության դեպքում նաև պետական կառավարման այլ մարմինների տվյալներից, եթե դրանց տրամադրումը չի հակասում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությանը:

18. Անտառների պետական մոնիթորինգի տվյալները հավաքագրվում, վերլուծվում, գնահատվում և տրամադրվում են վարչության կողմից:

19. Վարչությունը հավաքագրված տվյալները պետական կառավարման լիազորված մարմնի կողմից հաստատված հաշվառման գրանցամատյանում գրառելուց հետո մուտքագրում է համակարգչային տվյալների շտեմարան՝ կանոնակարգված հաշվառում իրականացնելու համար:

20. Մուտքագրված տվյալները վերլուծվում և գնահատվում են մուտքագրման օրվանից մինչև 30 օրվա ընթացքում:

21. Մուտքագրված տվյալները վերլուծելուց, գնահատելուց հետո, մինչև 15 օրվա ընթացքում, տրամադրվում են իրավասու պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին:

22. Անտառների և անտառային հողերի վիճակի գնահատումը կատարվում է անընդհատ կամ պարբերական ընթացակարգով իրականացված դիտարկումների, անտառների օգտագործման, պահպանության, պաշտպանության և վերականգնման բնագավառում ձեռնարկված միջոցառումների ուսումնասիրությունների արդյունքների վերլուծության հիման վրա:

23. Մոնիթորինգի տվյալները ներկայացվում են պետական կառավարման լիազորված մարմնի ղեկավարին՝ իրավիճակային (օպերատիվ), եռամսյակային և տարեկան հաշվետվությունների, աղյուսակների, առաջարկների, կանխատեսումների, քարտեզների ձևով՝ տպագիր և էլեկտրոնային տարբերակներով:

24. Մոնիթորինգի արդյունքների վերաբերյալ հաշվետվությունը պարտադիր ընդգրկում է՝
ա/ օբյեկտի և (կամ) երևույթի տեղադիրքի նկարագրությունը (աշխարհագրական կոորդինատներ, համայնք, անտառտնտեսություն, տեղանուն, մայրուղի, փայտանյութի շուկա, արտադրամաս և այլն).

բ/ հայտնաբերված խախտման տեսակը (ապօրինի հատում, հատման եղանակների խախտում, մատղաշի ոչնչացում, ապրանքայնության կորուստ, թերվճարում, փաստաթղթերի բացակայություն, կեղծում կամ անձշտություն և այլն).

գ/ քանակական բնութագրերը՝ մակերեսը (հեկտար), ծավալները (խոր.մետր) և այլն.

դ/ որակական բնութագրերը՝ շինափայտ, վառելափայտ, սղոցանյութ, ծառատեսակ և այլն.

ե/ ուսումնասիրության օրը, ամիսը, տարեթիվը, իրականացնողը (կազմակերպությունը, անունը, ազգանունը, այլ տվյալներ).

զ/ հայտնաբերված խախտումների արդյունքում հասցված վնասի տնտեսական գնահատումը (արժեքը, երկարաժամկետ վնասները և այլն)։

է/ կրկնվող և համադրված երևույթների պատճառների ուսումնասիրությունները, կանխատեսումները, առաջարկները և վիճակագրական վերլուծությունները։

ը/ տվյալ հաշվետվությանը կից քարտեզագրական նյութերը։

թ/ հենակետերի և դիտցանցի դիտարկումների ամփոփ վերլուծությունը։

25. Վարչությունը համակարգչային կայքի, ինչպես նաև տեղեկատվական այլ միջոցներով ապահովում է սույն կարգի 6-րդ կետով նախատեսված դրույթների վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը։

26. Մոնիթորինգ իրականացնող աշխատողներն ապահովում են անտառների պահպանության, պաշտպանության, վերականգնման և օգտագործման գործընթացներին մարդածին ներգործությունների, ապօրինի հատումների, բնափայտի տեղափոխման, իրացման և բացասական այլ գործողությունների վերաբերյալ տեղեկատվություն տրամադրված աղբյուրի գաղտնիությունը։

IV. ԱՆՏԱՌՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՏՎՅԱԼՆԵՐԸ

27. Անտառների պետական մոնիթորինգի իրականացման համար օգտագործվում են՝
ա/ անտառների պետական հաշվառման և անտառչինական (անտառկառավարման պլաններ) տվյալները։

բ/ հաշվարկային հատատեղից բնափայտի մթերման տարեկան չափաքանակի վերաբերյալ տվյալները։

գ/ անտառների պահպանության, պաշտպանության, վերականգնման և օգտագործման լիազորություններով օժտված պետական մարմիններից, կազմակերպություններից, ֆիզիկական և իրավաբանական անձանցից, իրավապահ և մաքսային մարմիններից անտառների պահպանության, պաշտպանության, օգտագործման, վերականգնման, անտառային օրենսդրության խախտումների, բնափայտի տեղափոխման և իրացման բնագավառում ձեռնարկված և իրականացված միջոցառումների վերաբերյալ ստացված տվյալները։

դ/ դիտացանցի (այդ թվում՝ հեռակառավարման) տվյալները։

ե/ անտառների օգտագործման, պահպանության և պաշտպանության ոլորտը կարգավորող իրավական ակտերը։

զ/ բնապահպանական, հասարակական այլ կազմակերպությունների դիտարկումների և ուսումնասիրությունների տվյալները, ստացված ահազանգերը։

է/ փաստացի իրականացված դիտարկումների, հետազոտությունների և ուսումնասիրությունների արդյունքները։

V. ԱՆՏԱՌՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

28. Անտառային պետական մոնիթորինգի տվյալներն օգտագործվում են՝

ա/ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության և պետական կառավարման մարմինների կողմից՝ պետական քաղաքականության և ռազմավարության, դրանց կենսագործման պետական ծրագրերի մշակման և իրականացման համար։

բ/ անտառների պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում համապատասխան լիազորություններով օժտված իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից անտառների կայուն կառավարման նպատակով։

գ/ տեղական ինքնակառավարման մարմինների և համապատասխան ոլորտում գործունեություն ծավալելու իրավունք ունեցող հասարակական կազմակերպությունների կողմից։

VI. ԱՆՏԱՌԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

29. Մոնիթորինգ իրականացնող անձինք իրավունք ունեն՝

ա/ անտառների և անտառային հողերի վիճակի գնահատման նպատակով անարգել մուտք գործելու հանրապետության բոլոր անտառային տարածքները՝ անկախ անտառների սեփականության ձևից և նպատակային նշանակությունից։

բ/ ուսումնասիրելու անտառային տնտեսության վարման և անտառօգտագործման բնագավառում իրականացված և իրականացվող միջոցառումների հետևանքները։

գ/ ուսումնասիրելու անտառների և անտառային հողերի, բնության հատուկ պահպանվող տարածքների համակարգում ընդգրկված անտառների պահպանության և պաշտպանության ընթացակարգը (ռեժիմը)։

դ/ ուսումնասիրելու անտառների և անտառային հողերի վրա անտառային տնտեսության վարման ու անտառօգտագործման հետ չկապված շինարարական և պայթեցման աշխատանքների, օգտակար հանածոների արդյունահանման, մալուխների, խողովակաշարերի ու այլ հաղորդակցողիների անցկացման հետևանքները։

ե/ համապատասխան պետական մարմիններից ստանալու տեղեկատվություն անտառակառավարման, ինչպես նաև անտառային տնտեսության վարմանը վերաբերող իրավական և գերատեսչական նորմատիվ ակտերի վերաբերյալ։

զ/ իրավապահ, մաքսային և պետական այլ մարմիններից ու կազմակերպություններից ստանալու տեղեկատվություն անտառային օրենսդրության խախտումների, փայտանյութի անօրինական տեղափոխումների և իրացման, հանրապետությունից արտահանվող և հանրապետություն ներկրվող փայտանյութի շարժի վերաբերյալ:

30. Մոնիթորինգ իրականացնող անձինք պարտավոր են՝

ա/ անտառներում անտառների և անտառային հողերի վիճակի գնահատման նպատակով իրականացվող դիտարկումների և ուսումնասիրությունների մասին, Լեռնային Ղարաբաղի Յանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, տեղեկացնել անտառային տնտեսություն վարող կամ անտառօգտագործում իրականացնող սուբյեկտների կամ անտառի սեփականատիրոջը.

բ/ անտառային տնտեսություն վարող կամ անտառօգտագործում իրականացնող սուբյեկտին, անտառի սեփականատիրոջը (նրա ներկայացուցչին) ներկայացնել ծառայողական վկայականը.

գ/ կատարված ուսումնասիրությունների արդյունքների մասին տեղեկացնել անտառի սեփականատիրոջը, անտառային տնտեսություն վարող կամ անտառօգտագործում իրականացնող սուբյեկտին.

դ/ կատարած ուսումնասիրությունների արդյունքների մասին առնվազն 3 ամիսը մեկ անգամ տեղեկատվություն ներկայացնել ապօրինի հատումների դեմ պայքարի աշխատանքները համակարգող անտառների պետական մոնիթորինգի խորհրդին և անտառների կառավարման ոլորտում լիազորված պետական մարմնին.

ե/ չմիջամտել և չխոչընդոտել տնտեսվարող սուբյեկտի բնականոն գործունեությանը.

զ/ ապահովել անտառների և անտառային հողերի վրա ներգործությունների, դրանց հետևանքների, ապօրինի հատումների, բնափայտի տեղափոխման, իրացման և բացասական այլ գործողությունների վերաբերյալ տվյալների հավաքագրումը, կենտրոնացված հաշվառումը, մշակումը և պահպանումը.

է/ ապահովել Լեռնային Ղարաբաղի Յանրապետության անտառային օրենսգրքի և ոլորտը կարգավորող այլ իրավական ակտերի համաձայն իրականացվող անտառների պահպանության, պաշտպանության, անտառօգտագործման և վերականգնման, դրանց հետևանքների, ապօրինի հատումների, բնափայտի տեղափոխման, իրացման և բացասական այլ երևույթների դեմ պայքարի միջոցառումների թափանցիկությունը:

**ԼՂՀ կառավարության աշխատակազմի
ղեկավար – նախարար**

Ս.ԳՐԻԳՈՐՅԱՆ